ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Քաջ Նազա՞ր…Ղոռոբուղա՞, քա՜՛ջ Նազա՞ր…Ղոռոնթի, քա՜՛ջ Նազա՞ր, հո՛, հո՛, հո՛, հո՛, (հսկայաբար ծիծաղում է։ Ծիծաղում են եւ միւսները մինչեւ տնքալը։)

ՏԷՐՏԷՐ.– Դուք ծիծաղում էք, օրհնեալներ, բայց Քաջ Նազարը գերի է արել մեր աշխարհքը։ Ձարդում է ու ջարդում։

ԽՈՉԵՆԻ.– Հա՛, հա՛, հա՛, հա՛…

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հո՛, հո՛, հո՛, հո՛…

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Հի՛, հի՛, հի՛, ո՞նց է ջարդում։ Հըա՜մ։

ՏԷՐՏԷՐ.– Ձեզ համար հեշտ է, բայց մեղ համար դժվար է. օրհնեալներ։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հա՜՛, էդ մեկը ղորթ է, հըա՜մմ…

ՏԷՐՏԷՐ.– Աւելի դժուար է հոգեւորներիս համար։ Քանի որ աշխարհքիս մեղքը մենք ենք բառնում։

ԽՈՉԵՆԻ.– (Կիսովին վեր է կենում ու ժպտալով եւ հետաքրքիր մօտենում է տէրտէրին եւ բռնելով նրա միրուքի ծայրից՝ շոշափում է) էս ի՞նչ է։

ՏԷՐՏԷՐ.– Միրուքս է, օրհնեալ։

ԽՈՉԵՆԻ.– Ինչի՞ է սուր։

ՏԷՐՏԷՐ.– Նուազ ենք, քիչ ենք ուտում։

ԽՈՉԵՆԻ.– Վոոաա՞յ քիչ էք ուտո՞ւմ, խեղճ։ (Միրուքը բռնած դես-դեն է քաշում տէրտէրին։)

ՏԷՐՏԷՐ.– (Խեղճ ու լացակումած ձայնով։) Այո, օրհնեալ, մենք աստուծո փոխանորդն ենք։ Քիչ ենք ուտում, որ եթէ աշխարհքիս բեռը շալակներիս բարձրանանք երկինք, աստծո մօտ՝ թեթեւ լինենք։ Այո՛, մենք աշխարհքի ծառաներն ենք։ Աղէտ է լինում՝ աղօթում ենք, եւ դրա փոխարեն մի քիչ ցորեն, մի քիչ իւղ ենք հաւաքում եւ համեստ ապրում։ Իսկ երբ աշխարհքում ջարդ է լինում՝ լաց ենք լինում այսպէս։ (Լաց լինելով) Մեա՜՛ա՜՛հ

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Լա՞ւ մարդիկ էք դուք…

ՏԷՐՏԷՐ.– Այո, օրհնեալ, լաւ մարդիկ ենք։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Ապա էդ Քաաջ Նաազաարը ինչի՞ է ջարդում ձեզ։ Հրա՜մ։

ՏԷՐՏԷՐ.– Մեզ շատ չի ջարդում։ Հսկաներին է ջարդում։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Բոո՞…

ՏԷՐՏԷՐ.– Մին զարկում է, հազար ջարդում։

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Բո՜՛, ո՞նց թէ…